ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03

**<< ՀՀՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-2024/03>> ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ**

ք. Իջևան << 06 >> սեպտեմբերի 2024թ.

ժամը 11:00

**Մասնակցում էին.**

Հանձնաժողովի նախագահ՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ՝ Մերուժան Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ՝ Աղաբեկ Գալստյան

Հանձնաժողովի անդամ՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ՝ Հասմիկ Խաչատուրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ՀՀ Տավուշի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ՝ Աննա Մանգասարյան

1. ՀՀՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-2024/03 ծածկագրով <<Մանկապարտեզների կարիքների համար գույքի>> ձեռքբերման մրցույթի հայտերի գնահատման վերաբերյալ.

Սույն ընթացակարգի թիվ 02 արձանագրությամբ 1,2,4,5 չափաբաժինների համար առաջին տեղ զբաղեցրած մասնակից Հրաչյա Վարդանյան ԱՁ-ին ՀՎՀՀ՝ 48039802 (էլեկտրոնային աճուրդի համակարգում (այսուհետ Համակարգ) հայտերը բացելու օրը Հրաչյա Վադանյան ԱՁ, ՀՎՀՀ՝ 26664424) և ԻՄՓՐՈՒՎ ՍՊԸ-ին տրվել էր մեկ աշխատանքային օր օրենքով սահմանված կարգով և ժամկետներում կատարել շտկումներ գնման հայտերում արձանագրված թերությունները վերացնելու համար:

ԻՄՓՐՈՒՎ ՍՊԸ-ն սահմանված ժամկետում Համակարգում ներկայացրել է շտկում, իսկ Հրաչյա Վարդանյան ԱՁ-ն չի ներկայացրել շտկում, մասնավորապես.

Թիվ 02 արձանագրությամբ հաստատվել էր այն փաստը, որ Հրաչյա Վարդանյան ԱՁ-ն ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի կողմից հրապարակված ՀՀՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-2024/03 ծածկագրով մրցույթին իր մասնակցության դիմում-հայտարարությունը (Հրավերով հաստատված Հավելված 1-ը) կցել էր Համակարգ լրացրած այլ անվանումով և այլ ՀՎՀՀ-ով մասնակցի անունից, որը հաստատված էր մեկ այլ անձի էլեկտրոնային ստորագրությամբ, որի անունին տրված լիազորությունն առկա չէր: Նշյալ անհամապատասխանություններն արձանագրվել էին հայտերը բացվելուց հետո տվյալ մասնակցի ՀՎՀՀ-ն ՀՀ ՊԵԿ ՀՎՀՀ գրանցման ռեգիստրում ստուգելուց հետո:

**Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 42-րդ կետը՝ ՀՀՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-2024/03 ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը որոշեց.**

1. Մերժել 1,2,4,5 չափաբաժինների համար առաջին տեղ զբաղեցրած մասնակցի Հրաչյա Վարդանյան ԱՁ-ի ՀՎՀՀ՝ 48039802 (Հրաչյա Վադանյան ԱՁ, ՀՎՀՀ՝ 26664424) հայտը՝ գնահատելով այն անբավարար:
2. 6-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ ԻՄՓՐՈՒՎ ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչել:
3. Հրապարակել չկայացած ընթացակարգերի մասին հայտարարությունը գնումների պաշտոնական տեղեկագրում:
4. Մրցույթն անցնում է անգործության ժամանակահատվածի փուլ/10 օրացուցային օր:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Գալստյան

Հ. Խաչատուրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մանգասարյան